

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_\_\_ N \_\_\_\_\_-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԱՎՏՈՄՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի նիստի N26 արձանագրության 19-րդ կետով հավանության արժանացած տնտեսական, ռազմավարական, սոցիալական և տարածքների համաչափ զարգացման չափորոշիչների վրա հիմնված միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման հայեցակարգի 21-րդ կետին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման համար կատարվող ֆինանսական ներդրումների տեղաբաշխման՝ ռազմավարական տարբեր չափորոշիչների վրա հիմնված առաջնահերթությունների որոշման կարգը (այսուհետ՝ Կարգ):

1.2 Կարգը կիրառելի է միայն ճանապարհային ցանցի նախագծային լուծում պահանջող պահպանման (հիմնանորոգման) և զարգացման (վերակառուցման և նոր շինարարության) համար:

1.3 Կարգի հիմքում ընկած է որոշումների կայացման բազմաչափանիշային վերլուծության (այսուհետ՝ ԲԶՎ) շրջանակի (սխեմայի) կիրառությունը:

#### 2. ԲԱԶՄԱԶԱՓԱՆԻՇԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ

2.1 ԲԶՎ շրջանակը բաղկացած է՝ չափանիշներից, չափանիշների ցուցիչներից, ցուցիչների միավոր սանդղակներից և չափանիշների կշիռներից:

2.2 ԲԶՎ շրջանակին ներկայացվող պահանջներն են՝

1) Չափանիշները պետք է լինեն՝ հիմնված ճանապարհային ոլորտի քաղաքականության հիմնական նպատակների վրա, միմյանց չկրկնող և կառավարելի սահմաններում գտնվող քանակով,

2) Չափանիշների ցուցիչները ներդրումների հավանական արդյունավետության չափման համար են, պետք է ունենան գնահատման միջակայքեր և դրանց նկարագրման համար անհրաժեշտ տվյալները պետք է լինեն մատչելի և հեշտ հավաքագրվող,

3) Ցուցիչների միավոր սանդղակները ծառայում են տարբեր միավորներով չափված չափանիշները միմյանց հետ համեմատելու համար, ընդ որում որքան մեծ է ցուցիչի արժեքն, այնքան բարձր է գնահատման միավորը՝

4) Չափանիշների կշիռներն արտահայտում են չափանիշների հարաբերական կարևորությունը միմյանց նկատմամբ և դրանց հանրագումարը պետք է լինի 1 ամբողջ:

2.3 Որպես չափանիշներ սահմանվում են՝ ճանապարհային կապի բարելավումը, տնտեսական արդյունավետությունը և տարածաշրջանների համաչափ զարգացումը:

2.4 Ճանապարհային կապի բարելավումը

1) վերաբերում է բնակչությանը դեպի հիվանդանոցներ, կրթոջախներ, շուկաներ, աշխատավայրեր, սպասարկման ծառայություններ, մշակութային և այլ հաստատություններ որակյալ ճանապարհային կապով ապահովմանը,

2) բարենպաստ պայմաններ է ստեղծում մասնավոր, հանրային և կոմերցիոն տրանսպորտի զարգացման համար՝ նպաստելով նաև գործարար միջավայրի ձևավորմանն ու զարգացմանը, տեղական տնտեսության զարգացմանը և հնարավորություն ընձեռնելով նոր աշխատատեղերի ստեղծման համար,

3) կարևոր քաղաքական նպատակ է՝ գյուղական վայրերում բնակեցված միջավայրը պահպանելու և զարգացնելու համար,

4) բնորոշվում է «Շահառու բնակչության թիվը» ցուցիչով՝ հիմք ընդունելով վերջին մարդահամարի տվյալները,

5) մյուս երկու չափանիշների նկատմամբ ունի 0.3 կշիռ:

2.5 Տնտեսական արդյունավետությունը

1) բնորոշվում է «Ներքին շահութաբերության նորմա» ցուցիչով, որը որոշվում է տնտեսագիտական վերլուծությամբ,

2) մյուս երկու չափանիշների նկատմամբ ունի 0.4 կշիռ:

2.6 Տարածաշրջանների համաչափ զարգացումը,

1) վերաբերում է ճանապարհների վիճակի բարելավման և զարգացման միջոցով մարզերի միջև տնտեսական և սոցիալական զարգացման առկա տարբերությունները մեղմելուն,

2) բնորոշվում է «Տարածաշրջանում վիճակի «վատ» գնահատական ունեցող ճանապարհների կշիռը տարածաշրջանի ճանապարհային ցանցում» ցուցիչով, որը որոշվում է ճանապարհների ամենամյա ուսումնասիրությամբ,

3) մյուս երկու չափանիշների նկատմամբ ունի 0.3 կշիռ:

### **3. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

3.1 Ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման ընդհանուր ԲԶՎ շրջանակը բերված է ստորև՝

Գնահատվող չափանիշ	Ցուցիչ	Միավորներ ի սանդղակ	Կշիռ	Ճան. 1 («3» x «4»)	Ճան. 2 («3» x «4»)	Ճան. n («3» x «4»)
1	2	3	4	5	6	7
Ճանապարհային կապի բարելավում	Շահառու քնակչության թիվը		0.3			
	>5000	3				
	1000-ից 5000	2				
	< 1000	1				
Տնտեսական արդյունավետությ ուն	Ներքին շահութաբերությ ան նորմա (EIRR)		0.4			
	>12%	3				
	10-ից 12%	2				
	< 10%	1				
Տարածաշրջաննե րի համաչափ զարգացում	Տարածաշրջանու մ վիճակի «վատ» գնահատական ունեցող ճանապարհների կշիռը տարածաշրջանի ճանապարհային ցանցում		0.3			
	>40%	3				
	25-ից 40 %	2				
	<25%	1				
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>			<b>1</b>	<b>Σ</b>	<b>Σ</b>	<b>Σ</b>

3.2 Այն մասնավոր դեպքերում, երբ տնտեսական արդյունավետության նկատմամբ առկա է համապատասխանության որևէ կոնկրետ նախապայման, ինչպիսին է օրինակ, արտաքին աղբյուրներից ֆինանսավորման ծրագրերի դեպքում, ապա միայն տվյալ նախապայմանին բավարարող ճանապարհներն են ընդգրկվում ԲԶՎ շրջանակում՝ մյուս չափանիշների նկատմամբ հետագա գնահատման համար և ԲԶՎ շրջանակը կունենա հետևյալ տեսքը՝

Գնահատվող չափանիշ	Ցուցիչ	Միավորների սանդղակ	Կշիռ	Ճան. 1 («3» x «4»)	Ճան. 2 («3» x «4»)	Ճան. n («3» x «4»)
1	2	3	4	5	6	7
Ճանապարհային կապի բարելավում	Շահառու բնակչության թիվը		0.5			
	>5000	3				
	1000-ից 5000	2				
	< 1000	1				
Տարածաշրջանների համաչափ զարգացում	Տարածաշրջանում վիճակի «վատ» գնահատական ունեցող ճանապարհների կշիռը տարածաշրջանի ճանապարհային ցանցում		0.5			
	>40%	3				
	25-ից 40 %	2				
	<25%	1				
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>			<b>1</b>	<b>Σ</b>	<b>Σ</b>	<b>Σ</b>

3.3 Միջպետական նշանակության ավտոճանապարհների համար ընդունվում է «Ճանապարհային կապի բարելավում» չափանիշի «Շահառու բնակչության թիվը» ցուցիչի վերին միջակայքը և միավորների սանդղակի առավելագույն միավորը:

3.4 Առաջնահերթությունը տրվում է առավել բարձր արդյունարար կշռված միավորներ ստացած ճանապարհներին:

3.5 Եթե գնահատվող ճանապարհները կամ դրանց մի մասը ստանում են հավասար արդյունարար կշռված միավորներ և դա խոչնդոտում է որոշման կայացմանը, ապա անհրաժեշտ է ավելի մանրամասնել ցուցիչների միջակայքերը և միավորների սանդղակները:

3.6 Այն ճանապարհներին, որոնց պահպանումը և զարգացումը ուղղված է պետության և հասարակության անվտանգության ապահովմանը, արտակարգ իրավիճակների հաղթահարմանը կամ բխում է պետության գերակա այլ շահերից, առաջնահերթությունը

կարող է տրվել ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ՝ առանց սույն կարգով դրանց առաջնահերթության գնահատման:

3.7 ԲԶՎ շրջանակը կարող է վերանայվել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի առաջարկությամբ՝ ճանապարհային ոլորտը համակարգող խորհրդի հավանությամբ:

## **Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ**

**Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

### **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը.**

Իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. հունիսի 19-ի նիստի N 26 արձանագրության 19-րդ կետով հավանության արժանացած տնտեսական, ռազմավարական, սոցիալական և տարածքների համաչափ զարգացման չափորոշիչների վրա հիմնված միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման հայեցակարգից բխող միջոցառումներով:

### **2. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

Ճանապարհային տրանսպորտի ոլորտը Հայաստանի Հանրապետությունում ունի ճանապարհների շինարարության և պահպանման համար հատկացվող ընդհանուր ֆինանսավորման պակաս,ինչը թույլ չի տալիս մի անգամից հիմնանորոգել ողջ ճանապարհային ցանցը կամ նորմատիվ պարբերականությամբ իրականացնել ճանապարհների նորոգման և վերականգնման աշխատանքներ: Հետևաբար խնդիր է առաջանում ճանապարհային ոլորտին ուղղվող ներդրումները բաշխել առավելագույնս արդյունավետ առաջնահերթությամբ՝ հաշվի առնելով ոչ միայն տնտեսական արդյունավետությունը,այլև՝ ակնկալվող այն օգուտները, որոնք ուղղակիորեն դրամական արտահայտություն չունեն, ինչպես օրինակ՝ շահառու բնակչության սոցիալական վիճակի բարելավումը, տվյալ տարածաշրջանի ընդհանուր զարգացումը և այլն:

### **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունումը թույլ կտա սահմանել է Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման ՝ ռազմավարական տարբեր չափորոշիչների վրա հիմնված առաջնահերթությունների որոշման կարգը՝ ապահովելով կատարվող ֆինանսական ներդրումների տեղաբաշխման առավել արդյունավետություն:

## Ց Ա Ն Կ

**Իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը**

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների հիման վրա:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին**

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին**

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը ընդունումը Հայաստանի Հանրապետության ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

## Ց Ա Ն Կ

**Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծի հեղինակների**

Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և զարգացման առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից: